ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2019-2025 թթ.

25 տարի միասին

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած Եվրասիա միջազգային համալսարանը (ԵՄՀ) ավելի քան 25 տարվա պատմություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություն է: Ծուրջ քառորդ դար պատմության ընթացքում համալսարանն անցել է զարգացման մի քանի փուլեր: Առաջին փուլը (1997-2005) կարելի է անվանել հիմնադրման և կայացման, երբ համալսարանը ստացավ առաջին լիցենզիաները և 2002 թ. անցավ առաջին պետական հավատարմագրման (անժամկետ) գործընթաց:

Համալսարանը այդ փուլը հաջողությամբ հաղթահարեց և երկրորդ փուլը՝ 2005-2015 թթ., արդեն իսկ մեկնարկեց իր սեփական մասնաշենքում: 2005 թ.-ից համալսարանն անցում կատարեց կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) և այնուհետև աշխատեց Բոլոնիայի գործողությունների ծրագրով: Այդ փուլը նշանավորվեց նաև նրանով, որ համալսարանը հաղթահարեց մի կարևորագույն հանգրվան՝ ստացավ ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ ՀՀ Կառավարության 30.06.2011 թ. N 959-Ն «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» որոշմամբ նախատեսված կարգով: Այդ փուլում համալսարանը իրականացրեց առաջին վստահ քայլերը միջազգայնացման ուղղությամբ, իրականացվեցին փոխանակման ծրագրեր: ԵՄՀ-ում բացվեց բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիր՝ ասպիրանտուրա (կառավարման, իրավագիտության և օտար լեզուների ամբիոններում):

2013 թ.-ից համալսարանն առաջարկում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ծրագրեր «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» (Ը.00.02), «Ռոմանագերմանական լեզուներ» (Ժ.02.07) և «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, տեղական ինքնակառավարման, բնապահպանական, եվրոպական իրավունք և պետական կառավարում)» (ԺԲ.00.02) մասնագիտություններով:

2015 թ. հավատարմագրմանը հաջորդող ժամանակաշրջանից մինչ օրս կարող ենք պայմանականորեն անվանել համալսարանի զարգացման երրորդ շրջափուլ, երբ մեկնարկեց ի հայտ

եկած խնդիրների լուծմանն ուղղված բարեփոխումների ծրագիրը: Արդյունքում նախանշվեց հետազոտական ենթակառուցվածքների զարգացման մեկնարկը, առավել հստակեցվեց կառավարման համակարգը, ուրվագծվեցին համալսարանի առաքելության և տեսլականի ներկա հիմնական շրջանակները, արագացված տեմպերով իրականացվեցին միջազգայնացման գործընթացները: 2018 թ. համալսարանը արդեն ստացավ ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ մեկը հանրապետության երեք մասնավոր համալսարաններից (ավելի քան 25-ից), որը ստացել է 4 տարվա ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Ներկայումս ԵՄՀ-ն կրթական հնարավորություններ է ապահովում Հայաստանի Հանրապետության Որակավորումների ազգային շրջանակի VI՝ բակալավր, VII՝ մագիստրոս, VIII՝ հետազոտող (գիտական աստիճանը՝ գիտությունների թեկնածու) աստիճաններում: Համալսարանի հիմնական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերն են՝ «Կառավարում», «Իրավագիտություն», «Օտար լեզուներ», «Ֆարմացիա», «Տեղեկատվական համակարգեր», «Լրագրություն», «Տարրական մանկավարժություն» և «Ֆինանսներ»: Մագիստրոսական աստիճանը ներառում է «Սահմանադրական իրավունք», «Քաղաքացիական իրավունք և դատավարություն», «Քրեական իրավունք և դատավարություն», «Միջազգային և եվրոպական իրավունք», «Կառավարում», «Նախագծերի կառավարում», «Էլեկտրոնային բիզնեսի կառավարում», «Հյուրընկալության կառավարում», «Անգլերեն լեզու և գրականություն (TEFL)», «Տեղեկատվական համակարգեր» և այլ մասնագիտացումներ:

Համալսարանը շարունակաբար ուսումնասիրում է ԵՄ գործընկեր համալսարանների կրթական ծրագրերը՝ ապահովելու կրթական ծրագրերի համադրելիությունն ու ներդաշնակեցումը, ինչպես նաև խթանելու անձնակազմի և ուսանողների շարժունությունը: ԵՄՀ-ն ընդունել է կրեդիտների ամբողջական ճանաչման քաղաքականություն և մշակել համապատասխան մեխանիզմներ՝ ապահովելու այդ քաղաքականության իրագործումը: Էրազմուս+ ՀԳՀ ծրագրի շրջանակներում իրագործված նախագծերի քանակով ԵՄՀ-ն հանրապետության լավագույն բուհերի շարքում է: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ HARMONY ծրագրի շրջանակներում ԵՄ գործընկերների առաջարկությունների և ծրագրի իրականացման ընթացքում կատարված վերլուծությունների հիման վրա ԵՄՀ-ն մշակել է միջազգայնացման առանձին ռազմավարություն:

Այսպիսով, վերջին ժամանակահատվածի արդյունքներով այսօր արդեն Եվրասիա միջազգային համալսարանը ներկայանում է որպես դինամիկ զարգացող, միջազգային ուսանողների զգալի համակազմ ունեցող, կրթության որակը և նորարարությունը արժևորող հանրապետությունում հայտնի կրթագիտական հաստատություն: Համալսարանը իր ներուժի շնորհիվ վերջին տարիներին ընկալվում է որպես հանրապետության բուհական և հետազոտական համակարգերի բարեփոխումների առաջամարտիկ՝ որակին միտված բարձրագույն մասնագիտական հաստատություն:

ԵՄՀ համակարգմամբ ԵՄ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվում է դոկտորական կրթության բարեփոխումների ARMDOCT ազգային ծրագիրը, 2023 թ. դարձյալ ԵՄՀ համահամակարգմամբ մեկնարկել է մեկ այլ ազգային ծրագիր (T-GREEN): ԵՄՀ-ում այսօր գործում է ՀՀ բուհական համակարգի համար եզակի՝ Ժան Մոնե ամբիոնը, Իտալիայի, Իսպանիայի, Լեհաստանի համալսարանների հետ իրականացվում են կրկնակի դիպլոմի ծրագրեր:

25 ՏԱՐԻ ՄԻԱՍԻՆ



25 ՏԱՐԻ ՄԻԱՍԻՆ

ԵՄՀ տեսլականը

Լինել տարածաշրջանում ճկուն կառավարում ունեցող առաջատար կրթական հաստատություն՝ միտված աշխատաշուկայի անընդհատ զարգացող պահանջներին համապատասխան գործնական հմտություններով ու կարողություններով, տեսական և կիրառական գիտելիքներով օժտված բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստմանը:

ԵՄՀ առաքելությունը

Համալսարանն իր առաքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ուսուցում, հետազոտություն և հանրային ծառայություն՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՑՈՒՄ

- Ուսուցանել որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին համապատասխան:

- Իրականացնել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն սոցիալական, հումանիտար գիտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների և դեղագիտության ոլորտներում՝ նպատակաուղղված աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:

- Ապահովել կայուն միջազգային համագործակցություն՝ տեղայնացնելով լավագույն փորձը ուսուցման և որակի ապահովման ոլորտներում, միջազգայնացնելով կրթական բովանդակությունը:

- Ստեղծել համագործակցային միջավայր կրթության շահառուների համար՝ նպաստելով արդիական գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցմանն ու տարածմանը:

- Համագործակցային մեթոդների միջոցով ուսանողների մեջ զարգացնել սովորելու հմտություններ, ինչպես նաև պատրաստակամություն ընդունելու նորը և անընդհատ կատարելագործվելու, նպաստելով հարափոփոխ միջավայրում նրանց մրցունակության ապահովմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Իրականացնել հետազոտություններ՝ ուղղված կրթության բովանդակության արդիականացմանը, միջազգայնացմանը, ինչպես նաև համալսարանի անընդհատ զարգացմանը:

- Իրականացնել ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին և միջազգայնացմանը միտված կիրառական հետազոտություններ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

- Ուսուցման և հետազոտության ոլորտներում ստացված արդյունքներին հաղորդակից դարձնել հասարակության լայն շրջանակների՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը:

- Խորացնել համայնքային հաստատությունների հետ համագործակցությունը, ուսանողների պրակտիկաների և ավարտական աշխատանքների հետազոտական բնույթի թեմաներում ընդգրկել նաև համայնքային նշանակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ:

ԵՄՀ արժեքները

Փոխադարձ հարգանք. մենք կրթական համայնք ենք՝ կապակցված բազմաթիվ այլ համայնքների հետ: Մեր համայնքը կազմված է «Եվրասիա» թիմի անդամներից, որոնց վերաբերմունքը մեկը մյուսի նկատմամբ սկզբունքային է, բաց, թափանցիկ և հարգալից:

Ներառականություն և բազմազանություն. մենք դիտարկում ենք դասախոսների և ուսանողների միջև համագործակցությունը որպես ԵՄՀ հիմնարար գործունեություն՝ կարևորելով տեղացի և օտարերկրացի ուսանողների, աշխատակիցների և գործընկերների կարիքների ժամանակին բացահայտման մեխանիզմների բազմազանությունը: Փոքրաթիվ լսարանները և ուսանող - դասախոս թվի ցածր հարաբերակցությունը բուհում հնարավորություն է ստեղծում համագործակցային

մեթոդների կիրառման միջոցով անհատապես ճանաչել ուսանողներին՝ զարգացնելով նրանց թիմային աշխատանքի հմտությունները, ստեղծագործական, վերլուծական մտածողությունը, ապահովելով առաջնորդության հնարավորություններ:

Հարատև կրթություն. գիտելիքն անգնահատելի արժեք է մեզ համար: Մենք նախընտրում ենք առաջնորդության և գերազանցության ճանապարհը՝ սերմանելով, զարգացնելով բուհի հիմնարար արժեքները ներքին շահակիցների շրջանակում: Ապրելով հարափոփոխ դարաշրջանում՝ մենք գիտակցում ենք, որ անընդհատ աճն ու կատարելագործումը և, ընդհանրապես, հարատև կրթությունը դարի պահանջն է:

Սոցիալական պատասխանատվություն. մենք աշխատում ենք մեր փորձառությունը ծառայեցնել բուհի ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանը՝ տրամադրած կրթության և իրականացրած հետազոտությունների համար հաշվետու լինելով պետությանն ու հասարակությանը:

Հաշվետվողականություն. մենք պատասխանատվություն ենք կրում մեր կատարած աշխատանքի համար միմյանց, մեր ուսանողների, շրջանավարտների, պետության և հանրության առջև:

Կայուն զարգացում. մենք հավատարիմ ենք ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգով» հռչակված նպատակներին և պատրաստակամ ենք համապատասխան արժեքների տարածմանը հանրության շրջանում: Մենք հանձնառու ենք կայուն զարգացման համապատասխան նպատակների իրագործմանը ուղղված կրթագիտական գործունեության իրականացմանը:



ԵՄՀ 2019-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Ռազմավարական առաջնահերթություններ

ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԱՃ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 1. Մարդկային կապիտալի զարգացում
ՆՊԱՏԱԿ 2. Բուհի զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների խթանում
ՆՊԱՏԱԿ 3. Կրթական նոր ծրագրերի զարգացում և ներդրում

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 4. Գործընթացների շարունակական օպտիմալացում
ՆՊԱՏԱԿ 5. Թիրախային գործընթացների ավտոմատացում

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 6. Ուսանողական համակազմի ընդլայնում
ՆՊԱՏԱԿ 7. Ծահառուների գոհունակություն և հավատարմություն
ՆՊԱՏԱԿ 8. Համագործակցության ընդլայնում

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ 9. Ֆինանսական կայունության ապահովում
ՆՊԱՏԱԿ 10. Բյուջեի արդյունավետ կառավարում
ՆՊԱՏԱԿ 11. Ֆինանսական ներհոսքի նոր աղբյուրներ

ՆՊԱՏԱԿ 1. Մարդկային կապիտալի զարգացում

1.1. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական կարողությունների շարունակական բարելավում՝ վերապատրաստման և որակավորումների բարձրացման ծրագրերի կատարելագործմամբ

1.2. Աշխատակազմի գնահատման և առաջխաղացման ներդրված գործիքակազմի կատարելագործում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Աշխատակազմի գոհունակություն վերապատրաստումների, որակավորման բարձրացման ծրագրերի որակից (առնվազն 75%)
- Աշխատակազմի անգլերեն լեզվի մակարդակ (մինչև 2022 թվականը առնվազն 50%-ը տիրապետում է B1 մակարդակով)
- Միջազգային վերապատրաստումների, գիտաուսումնական փոխանակման ծրագրերի մասնակցած աշխատողների և ասպիրանտների թվի աճի դինամիկա (տարեկան առնվազն 10% աճ՝ նախորդ տարվա համեմատ)
- Ուսանողների և աշխատակազմի թվային հմտությունների բարելավում (անկախ օգտագործողի մակարդակ (Independent user)) (մինչև 2023 թվականը առնվազն 50%-ը տիրապետում է)
- Օտար լեզուներով դասավանդող (եվրոպական չափանիշներով առնվազն B2/C1/C2 մակարդակներով) դասախոսների թիվ
- Հետազոտական կարողությունների բարելավմանն ուղղված վերապատրաստումների քանակ

ՆՊԱՏԱԿ 2. Բուհի զարգացմանն ուղղված կիրառական և գիտական հետազոտությունների խթանում

2.1. Բուհի զարգացմանն ուղղված հետազոտությունների խթանում (R&D)
2.2. Հետազոտական միջավայրի և ենթակառուցվածքների ապահովում
2.3. Հետազոտությունների որակի ապահովում և խթանում
2.4. Հետազոտական գործունեության միջազգայնացման խթանում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Գիտական աստիճան կամ կոչում ունեցող աշխատակիցների տոկոս (տարեկան առնվազն 50%)
- Նպատակային ներքին դրամաշնորհային ծրագրերի քանակ (տարեկան առնվազն 3)
- Գիտաժողովների և համաժողովների քանակ (տարեկան առնվազն 3)
- Միջազգային ամսագրերում հրապարակումների աճի դինամիկա (տարեկան առնվազն 10%)
- Հետազոտական ծրագրերի և հրապարակումների քանակ
- Հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների տոկոս (մինչև 2021 թ. առնվազն 10%)

ՆՊԱՏԱԿ 3. Կրթական նոր ծրագրերի զարգացում և ներդրում

3.1. Կրթական նոր ծրագրերի զարգացում և ներդրում՝ միտված աշխատաշուկայի պահանջների բավարարմանը, ինչպես նաև ուսանողական համակազմի միջազգայնացմանը

3.2. Կրթության բովանդակության, ուսուցման և ուսումնառության մեթոդների միջազգայնացում, վերջնարդյունքահենք ծրագրերի բարելավում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Համատեղ/կրկնակի դիպլոմների շնորհմամբ կրթական միջազգային ծրագրերի գործարկում (մինչև 2022 թվականը առնվազն 1)
- Համատեղ/կրկնակի դիպլոմների շնորհմամբ կրթական միջազգային ծրագրերում ներգրավված ուսանողների թիվ (մինչև 2022 թվականը առնվազն 10)
- Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր մասնագիտացումների քանակ (մինչև 2025 թվականը առնվազն 1 յուրաքանչյուր ամբիոնում)
- Ներքին կրկնակի դիպլոմի կրթական ծրագրերի զարգացում (մինչև 2025 թվականը առնվազն 2 ծրագիր)
- Կրթական ծրագրերում անգլերենով դասավանդվող դասընթացների քանակի ավելացում (առնվազն 5%)

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 4. Գործընթացների շարունակական օպտիմալացում

4.1. Կառավարչական և կրթական գործընթացների արդյունավետության գնահատման և շարունակական բարելավման ապահովում

4.2. Գործընթացների օպտիմալացում՝ ժամանակատարության և ծախսատարության նվազեցմամբ
Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Կառավարչական և կրթական գործընթացներից շահառուների գոհունակություն (տարեկան առնվազն 75%)

ՆՊԱՏԱԿ 5. Թիրախային գործընթացների ավտոմատացում

5.1. Թիրախային գործընթացների ավտոմատացում, առանց թղթաբանության (paperless administration) կառավարման նախադրյալների ստեղծում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Ներքին տեղեկատվական համակարգերի գործիքակազմի ընդլայնված կիրառություն՝ թղթաբանության նվազեցմամբ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 6. Ուսանողական համակազմի ընդլայնում

6.1. Ուսանողների հավաքագրման փոխլրացնող մեթոդների կիրառում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Ուսանողական համակազմի ընդհանուր թվաքանակի աճ (տարեկան նվազագույնը նախորդ տարվա համեմատ 10%)

- Բարձր առաջադիմությամբ ուսանողների ներգրավում (ուսանողական համակազմի առնվազն 10%-ն ունի բարձր առաջադիմություն)

ՆՊԱՏԱԿ 7. Շահառուների գոհունակություն և հավատարմություն

7.1. Բուհի վարկանիշի ամրապնդում արտաքին շահառուների շրջանում

7.2. Ներքին շահառուների գոհունակության ապահովում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Կրթական ծառայություններից գոհունակության ցուցանիշ (տարեկան առնվազն 75%)

- Ռեսուրսների և լսարանային պայմանների որակից ուսանողների գոհունակության ցուցանիշ (տարեկան առնվազն 75%)

- Ուսանողների և շրջանավարտների կողմից նոր դիմորդների ներգրավման ցուցանիշ (տարեկան առնվազն 20)

- Աշխատանքային պայմաններից գոհունակության ցուցանիշ (տարեկան առնվազն 75%)

- Աշխատակիցների կողմից նոր դիմորդների ներգրավման ցուցանիշ (տարեկան առնվազն 10)

- Ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքի տեղավորման ցուցանիշ (տարեկան առնվազն 55%)

ՆՊԱՏԱԿ 8. Համագործակցության ընդլայնում

8.1. Գործատուների հետ ռազմավարական համագործակցության ամրապնդում՝ կրթական և հետազոտական ծրագրերի համատեղ իրականացման նպատակով

8.2. Ազգային և օտարերկրյա բուհերի հետ նոր համագործակցությունների հաստատում, ինչպես նաև առկա համագործակցությունների ամրապնդում՝ փոխանակման, կարողությունների զարգացման և հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Կնքվող պայմանագրերի քանակ (յուրաքանչյուր ամբիոնում տարեկան առնվազն 3 նոր համագործակցություն)
- Գործող պայմանագրերի քանակ և համագործակցության որակ
- Դասավանդող գործատուների թիվ (յուրաքանչյուր ամբիոնում դասավանդողների առնվազն 30%-ը)
- Գործատուների հետ համատեղ ղեկավարմամբ թեզերի քանակ
- Գործատուների կողմից առաջարկված թեմաներով հետազոտությունների (թեզերի, ատենախոսությունների) քանակ (տարեկան առնվազն 50%)
- Փոխանակման ծրագրերի քանակ (6 նոր փոխանակման ծրագիր մինչև 2025 թ.)
- Կարողությունների զարգացման համատեղ ծրագրերի քանակ (2 նոր կարողությունների զարգացման ծրագիր մինչև 2025 թ.)
- Վարպետության դասերի և կազմակերպություններ արտագնա այցերի քանակ (յուրաքանչյուր ամբիոնում տարեկան առնվազն 20)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ 9. Ֆինանսական կայունության ապահովում

9.1. Յուրաքանչյուր կրթական ծրագրի շահութաբեր գործունեություն

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Եկամտաբերության մակարդակ (տարեկան առնվազն 15%)

ՆՊԱՏԱԿ 10. Բյուջեի արդյունավետ կառավարում

10.1. Բյուջեի նախահաշվի կազմում և կատարում՝ նվազագույն բացասական շեղումով

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Բյուջեի նախահաշվի կազմում և կատարում՝ նվազագույն բացասական շեղումով (տարեկան առավելագույնը 20% շեղում)

ՆՊԱՏԱԿ 11. Ֆինանսական ներհոսքի նոր աղբյուրներ

11.1. Կրթական ծրագրերի միջազգայնացում

Գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)

- Եկամտաբերության մակարդակ (տարեկան առնվազն 15%)

www.eiu.am
www.college.eiu.am
+374 10 24 94 38